եկեղեցու արևմտյան պատին կից, որի կենտրոնում բարձրացող չորս սյուների վրա նստած է բոլորշի լուսանցք ունեցող բուն գմբեթը։ Գավթի հատակը ծածկված է բազմաթիվ տապանաքարերով, որոնցից շատերն ունեն տապանագրեր։

Գավթի շինության միջոցին Զաքարյան Եղբայրների և Քուրդ ամիրայի կարգադրությամբ եկեղեցիները կրկին անգամ ազատվել են ամեն տեսակ հարկերից (արձ. 12)։

Նկ. 7. Ամենափրկիչ եկեղեցու վերին մասերը և ծածկը հս ամ կողմից

Իր գոյության ընթացքում գավիթը որևէ լուրջ վերանորոգման չի ենթարկվել, եթե չհաշվենք պարբերաբար կատարված ընթացիկ բնույթի (ծածկի սալքարերի փոփոխում, խախտված տեղերի ամրացումներ) նորոգումները։

4. Մեծ գավիթ։ Այս շենքը կոչվել է նաև դրսի գավիթ, Աստվածածնա ժամատուն, նախագավիթ։ Շինվել է 1211 թվականին Վաչուտանց Վաչե իշխանի կողմից, որ Զա-